ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/3773/02/24 ք. Երևան
27 Մայիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Արամ Մկրտչյանի, ծանոթանալով «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերության ընդդեմ «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության՝ անվավեր ճանաչել «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ի կարիքների համար «ավտոտրանսպորտային միջոցներին անհրաժեշտ յուղերի, քսայուղերի, զտիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՎՋ-ՄԱՊՁԲ-24/12/01 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.05.24թ. «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը: պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերությունը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի՝ անվավեր ճանաչել «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ի կարիքների համար «ավտոտրանսպորտային միջոցներին անհրաժեշտ յուղերի, քսայուղերի, զտիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՎՋ-ՄԱՊՁԲ-24/12/01 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.05.24թ. «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը: պահանջի մասին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ, 234.8-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի՝ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ի կարիքների համար «ավտոտրանսպորտային միջոցներին անհրաժեշտ յուղերի, քսայուղերի, զտիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՎՋ-ՄԱՊՁԲ-24/12/01 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.05.24թ. «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Հայցադիմումն ընդունել վարույթ, հայցադիմումի ներկայացման օր համարել 16.05.2024թ.:

3. Եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2024թ. հուլիսի 1-ը:

Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:

Պատասխանող «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից պահանջել որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել ՎՋ-ՄԱՊՁԲ-24/12/01 ծածկագրով մրցույթի գնման ընթացակարգի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Արամ Մկրտչյան

Signed by: ARAM MKRTCHYAN 1712720074
Date: Mon, 27 May 2024 14:38:28 GMT+04:00

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am